ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-26/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ներքին աուդիտի ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 28.11.2025թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Անի Թադևոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Արա Հակոբյան

Գագիկ Սարգսյան

Ռազմիկ Օհանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Պրոֆ Աուդիտ» ՍՊԸ, «Քրոու Արմենիա» ՍՊԸ և «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ կոնսորցիում	nanand@mail.ru

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«Պրոֆ Աուդիտ» ՍՊԸ, «Քրոու Արմենիա» ՍՊԸ և «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ կոնսորցիում	
		Վեռջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	139500000	116000000	139200000

4. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

4.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 01.12.2025թ. ժամը 15:00-ին

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1 **«Պրոֆ Աուդիտ» ՍՊԸ, «Քրոու Արմենիա» ՍՊԸ և «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

5.2 **Կոնսորցիումի** պայմանագիրը կնքված է մեկ տարով, մինչդեռ ձեռք բերվող աուդիտի ծառայությունների մատուցման ժամկետը նախատեսված է 3 տարվա համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ մերժել **«Պրոֆ Աուդիտ» ՍՊԸ, «Քրոու Արմենիա» ՍՊԸ և «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ կոնսորցիումի** հայտը՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Գնահատման արդյունքների մասին

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած, պայմանագիր չի կնքվում հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Անի Թադևոսյան /նախագահ/

---------- Արա Հակոբյան

---------- Գագիկ Սարգսյան

---------- Ռազմիկ Օհանյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/